

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ

(Առաջնորդական փախանուր
Արտաստյան քեմի)

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՍ ԱԿՆԱՐԿ Ս. ՀՈՒՓՍԻՄԵՒ, Ս. ԳԱՅԱՆԵՒ ԵՎ Ս. ՇՈՂԱԿԱԹԻ
ՎԱՆՔԵՐԻ ԵՎ ԱՅԴ ՎԱՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԹՈԼԻԿՈՍԱԿԱՆ
ՏԱՊԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ*

Գ. Ս. ՇՈՂԱԿԱԹԻ ՎԱՆՔ

Ս. Շողակաթի վանքը գտնվում է Վաղարշապատի հյուսիս-արևելյան կողմում: Այս վանքի նախնական վկայարանը, ըստ Ագաթանգեղոսի, կառուցվել է Ս. Մարիանե կույսի նահատակության վայրում, Վաղարշապատի արքունական հնձանում. «Ի հնձանն և մէջ այգույն, ուր էին նոցա վանքն»⁸⁰: Շողակաթի վանքի այժմյան վկայարանը և շինում է Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլու համաձայն, Հոդիսիմյանց և Գայանյանց լուսերի վկայարանների հետ. «Եւ արդ, կայք շինեցուք զվկայարանս, փոխել կոյսն ի հանգիստ... եւ կանգնեալ երիս կայարանս, մին ի հիւսուոյ յարելից կողանէ քաղաքին, ուր վկայեաց սանաւանն Հոդիսիմէ երեսուն և երեք ընկերօք, ու զմիւն շինեցին ի հարաւակողմ կուսէ սնտի, ուր վկայեաց Գայիանէ նորուն սնութին երկու ընկերօքն: Եւ զմիւն ևս մօտ ի նձանն ի մէջ այգույն, ուր էին նոցա վանքն: Շինեցին կաղմեցին զտեղիսն, և զարարեցին ոսկի և արծաթի կանթեղամբք ուցելովք, և լապտերօք վառելովք և աշտակօք բորբռքելովք»⁸¹:

«Ավելի ուշ, աղոթքի այս տունը կոչվում նաև Շողակար. «Թանգի ի նմա շող ասուածեղէն ի Հօրէ լուսոյ ծագեաց»⁸²:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1961 թվանի № Բ-ից և Գ-ից:

⁸⁰ Ազարանգեղոս, էջ 441.

⁸¹ Նույն տեղում:

⁸² «Էջմիածին», 1961 թ. հունվար, էջ 3, Վեհափառ պարապետի կոնդակից:

Ս. Շողակաթի վանքը կոչվել է նաև Մարիանե կուսի վանք: Շահիսաթունյանցը այդ մասին գրում է. «Մարիանէ անուն լինել սըրբոյ կուսին թէպէտ չոմիմք տեղեկութիւն ինչ գրոց, զի տկար՝ այն է հիւանդ և եթ գրեն հեղինակի պատմութեանց, այլ աւանդութիւն բնակչաց կողմանցս հասեալ առ մեզ՝ ստուգէ լինել նոյն, որպէս և անուն միոյն ի սըրբուհեացն՝ որ ի մէջ Վերի արգի կոչեցելոյն նահատակեալ կոչի (Թումիան) և այժմ»⁸³:

Այսօր էլ Ս. Շողակաթի եկեղեցու հարավային կողմում գտնվում է նահատակ կույսի վեմ-տապանը:

Մեր մատենագրության մէջ մինչեւ Ժէ դար շունենք առ այժմ որևէ հիշատակություն այս վանքի մասին:


Բնական է, որ Ս. Շողակաթի վանքն էլ դարերի ընթացքում ենթարկվել է մի շարք ավերածությունների: 1694 թվականին է, որ Նահապետ Ուռհայեցի կաթողիկոսը, քանդելով հին վկայարանը, շինում է եկեղեցին:

Հովհաննես եպիսկոպոս Շահիսաթունյանը և Հ. Ղ. Ալիշանը վկայում են. «Յայս տեղին նահատակութեան սրբոյ կուսին (Մարիանեի-Վ. Վ. Տ.) ի սկզբան անդ ընդ երկուց եկեղեցեացն Հոդիսիմեայ և Գայիանեայ ետ կառուցանել Սուրբն Գրիգոր զվկայարան յանուն նորա՝ յամի 301, որպէս ասացաւ այլ գնի այնը մինչեւ ցամ Տեառն 1694, թէ ոյք ոմանք ձեռնարկեալ նորոգեալ իցեն զայս եկեղեցի որպէս զմիւս երկուսն, չոմիմք ինչ ծանօթութիւն. և զի չոմի ինչ մնացուած յա-

83 Շահիսաթունյանց, Ա, էջ 281,

սաշին շինութեանց անտի, զի թերևս յարձանագրութեանցն լինէր տեղեկութիւն ըստ միացն. այլ գլխովին նորոգ կառուցեալ է տաճարն ի հիմանց ի ժամանակս նահապետ կաթողիկոսի Ուռհալեցւոյ՝ արդեամբք Աղամալ իշխանին Շոռոթեցւոյ յամի 1694, ի սրբատաշ բարանց բարեյարմար ձեսկերպութեամբ, միջակ դրութեամբ, և է փոքր բան զմիա եկեղեցիսն և անսին. ունի և կաթողիկէ ի միջավայր տանեացն և գափիթ վայելու՝ յորոյ վերայ է և ղանգակատուն

Հազար և հարիւր՝ քառասներեքի, ի Հայրապետութեան՝ Սուրբ էջմիածնի, Տեառն Նահապետի՝ հօր սրբազնի, Արդեամբք Աղամալ՝ բարեպաշտօնի, Գոլով բաղաքէն՝ նախիչնանի, Ծինեաց յիշատակ՝ փրկեալ զիւր հոգին, Հօրն Աղաջանին, մօրն նանակովին, նաև կողակցին իւր Մարիամին, Եւ որդւոց իւրոց՝ Ալբերդիոսին, Աղաթանգեղոսին, Աղէքսանդրոսին, Եւ Խարիսիմոս փոքր եղբայր սոցին,



Ա. ՇՈՂԱԿԱԹԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Նկարիչ՝ Գրիգոր Ավագյան

փոքրիկ. ունէր և կրկին գափիթ վիմակերտ ըստ տաճարին, այլ այն անկեալ տապալեցաւ ինքնին յամի Տեառն 1807»⁸⁴.

Ս. Շողակաթի եկեղեցու կառուցման մասին արևմտյան դրան վրա կա մինչև այսօր անաղարտ մնացած հետեւյալ արձանագրությունը.

«Շնորհօքն Աստուծոյ՝ Որդւոյն Միածնի, Շողակաթ անուամբ՝ տաճարս կանգնի, ի թուականին՝ մեր հայկականի,

⁸⁴ ուն տեղում, էջ 282—283. — Հ. Դ. Անդան, Ալյարատ, էջ 285.

Դստերաց իւրոց՝ Նոյեմբարային, Այլ և զԱսանէթ և նանակովին, Որք զմեզ յիշեն՝ առ Տէր ի բարին, Արժանի լիցին՝ տեսութեան նորինու:

Նահապետ կաթողիկոսի օրով, եկեղեցու շինության հետ միաժամանակ, կառուցվում են նաև քարաշեն միարանական-վանական մի քանի սենյակներ. Հաջորդ տարիներին կառուցվում են նաև փայտաշեն և հողաշեն սենյակներ. Ապա կառուցվում են զանքի շուրջի պարիսպը և բուրգերը. Հյուսիս-արևմբույան մուտքի առաջ, արտաքին պարսպի

մոտ կանգնեցվում է նաև մի գեղեցիկ խաչքար, եկեղեցու շինության մասին մի փոքր արձանագրությամբ։ Մինչև Ղուկաս Կարնեցիի կաթողիկոսի օրերը (1780—1799) այդ խաչքարի առաջ գնում էին գրակալ և Ավետարան՝ «յերկրպագութիւն» և ի համբուրումն»։

Տ. Խանապետ Ա. Եղիսաբու (1691—1705
թ. թ.), Տեր Արքահամ Գ Կրետացու (1734—
1737 թ. թ.) շիրիմների տեղը Ս. Շողակարի
վանելում. — Վերջերս Ս. Շողակաթի վանքում
կատարված վերանորոգության ժամանակ,
զավթի Հարավային և Հյուսիսային կողմե-
րում երեսն եկան այլ երկու շիրիմներ, ա-
ռանդ տապահության:

Ս. Ծողակաթի վանքի բալթում թաղված Ան Նահապետ Ա Եղիսացի և Աբրահամ Դ Վրբեացի կաթողիկոններու:

Շահնամքունյանցը և Հ. Պ. Ալիշանը, ինչպես նաև Օրմանյանը, սակայն, միաձայն քննումնում են, որ Ս. Շողակաթ վանքի գավթում եղած երկու գերեզմաններից հյուսիսափնյ՝ նահապետ Ա. կաթողիկոսինն է, իսկ Հարավային՝ Արքահամ Գ. Կրետացունը:

Նահապետ Եղիսացի, ձեռնասուն աշակերտ՝ Եղիսաբետ կաթողիկոսի, ... եկեղեցաստանեցաւ յԱթոռ Հայրապետութեանն... Ա կացեալ ի նմին ընդ ամենայն ամս ժԴ, և ամբիսս իբր 10, վախճաննեցաւ ի 13 յունիսի և Պաղեցաւ ի գավթի եկեղեցւոյն Շողակաթ անուաններու ի հիմական սոսովանն»⁸⁶.

Հ. Պ. Ալիշանը հաստատում է նույնը⁸⁷:
Խսկ Օրմանյան սրբազնը բոռով է, «Եղա-
պաթ եկեղեցին և վանատունը բոլոր հար-
կիցներով՝ Աղամալ Շոռոթեցի իշխանին
Խախրով շինվեցավ, իսկ մահվան պարագա-
ւերն ալ հիշատակված չինք գտներ, միայն
չերեցմանը հայտնի է յուրաշեն վանքին,
Շողակաթի բակին մեզ»⁸⁸:

Ս. Շողակաթի վանքի բակում թաղված ահապես կաթողիկոսի շիրիմը ժամանակին ունեցել է հետեւյալ տապահագրությունը.

ԱՅՍԻ ՀԱՊԱՆԻ ԴԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ

ՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԱ. ՆԱՀԱՊԵՏ ԱՆՈՒԱՄԲ

ՈՐ Է ՏԵՂԵԱՒ ՈՒՐՉԱՅԵՑԻ

Ի ԹՈՒԻՒՆ ՌՃԴՐ» (յամի 1705):⁸⁹

Ա. Շողակաթի վանքի գավթում թաղված

Նաև Արրաջամ գ Կրետաց

85 Համեմատիվ բանակ 11 - ի 28

85 Կումարական, է., էջ 28.

87 Հ. Պ. Ալիշան. «Արարատ».

88 Օրմանյան, «Ազգապատում».

89 Ծահիսարունյանց, Ա, էջ 285.

Այսպատ», էջ 236:

Մեր մատենագրության մեջ հայտնի է Կրետացու «Պատմութիւն անցիցն իւրց և Նատիր շահին պարսից» (Վաղարշապատ, 1870 թ.) աշխատովթյունը, որը արևելագետների կողմից համարվում է կարևոր աղբյուր կովկասագիտության և մասնավորապես նադիր շահի գործունեության վերաբերյալ։ Այս հանգամանքը բնդումում են սովորական արևելագետները⁹⁰։

Աբրահամ կաթողիկոսը վախճանվում է 1737 թվականի ապրիլի 18-ին և թաղվում «ի գալիքի տաճարին Շողակաթ անուանելոյ ի ձախակողման նորա»⁹¹:

Մեկ չափողվեց գտնել Աբրահամ Կրետաց տապանագրությունը: Եածսաթունյանցը, որը 1840-ական թվականներին հավաքել և գրի է առել Ս. Հոդիսիմեսի, Ս. Գայանեի և Ս. Շողոկաթի վանքերում թաղված շատ կաթողիկոսների տապանագրություններ, վկայում է, որ «Աստ ամփոփեցաւ և մարմին Աբրահամ կաթողիկոսի Կրետացոյ ի հարաւակողմանն ի թուին Հայոց ՈծԶե. յամի 1736 (երսի վրիպակ է. պետք է լինի 1737—Վ. Վ. Տ.), այլ մարմարինեայ վէմ բարձեալ գոլով անտի, ընդ նմա անհետացեալ է և մակագրութիւն նորա»⁹²,

Հ. Պ. Ալիշանը ևս վկայում է նույնը, կը թ-
եւել Շահնախթումլանցի սխալը. «Անդ թա-
ղեալ և Աբրահամ Գյամի 1736. բայց տա-
պանաքարն բարձեալ է»⁹³.

Օրբանյան սրբապանը, որպես Աթրահամ Օրեստացու մահվան թվական, ընդունում է 1737. «Պիտք կըլլա բսել, թե ձմեռնային ու մորությամբ Թափրիզն դառնալովը՝ ողորոշին տկարացավ, և խոթագին անցուց ձմեռը. գարնան բացվելուն, 1737 ապրիլի 18-ին, որ կիրակիի երկուշաբթին, վախճանեցավ, թաղվեցավ Ս. Շողակաթի գավիթին ձաւակողմբ»⁹⁴;

Ս. Շողակարի վանելում կատարված վե-
անորոգությունները S. S. Վազգեն Ա. Կա-
ռողիկոսի օրով.— 1694 թվականին Ս. Շո-
ակաթի եկեղեցու շինությունից հետո, ա-
շշին անգամն էր, որ S. Վազգեն Ա. Վեհա-
հառ Կաթողիկոսի օրով վերանորոգեց Ս.
Պողակաթի վանքը:

1959 թվականին Ս. Շողակաթի վանքում
կավեցին շինարարական աշխատանքները,
վիրատվությամբ հալեպարնակ բարերար
լը. Սուրբն Գյուղենտեղուանի:

⁹⁰ М. Р. Арунова, К. З. Ашрафян, «Государство Надир-Шаха Афшара», Москва, 1958 г., стр. 21:

⁹¹ Շահիսարունյանց, Ա, էջ 227,

92 Նույն տեղում, էջ 285,

⁹³ З. Г. Уլիշвили, «Циркачевы», № 236,

⁹⁴ Օրմանյան, «Ազգապատում», Բ, էջ 2912:

Վեհափառ Հայրապետի գլխավորած Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովը մրագրել էր վանքը վերանարոգել, եկեղեցու վանդել և ցու Ս. Սեղանը ամբողջովիյամբ քանդել և հայկական ոճով այն վերակառուցել:

1959—1960 թվականներին Ս. Շողակաթի վանքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Պարսպապատվել է վանքի հողամասը 2,70—3,00 մ. բարձրությամբ և 330 մ. 2,70—3,00 մ. բարձրությամբ, որից 120 մետրը փռղոցներկարությամբ, որից 120 մետրը փռղոցների երկայնքով՝ մետաղյա ճաղերով: Պարսպապատումը կատարվել է Արթիկ տուֆի վարդագույն սրբառաշ քարերով:

2. Սալահատակվել է Ս. Շողակաթի եկեղեցու շուրջը մոտ 300 քառակուսի մ. տարածությամբ: Սալահատակումը կատարվել է շափածո տուփ քարի սալերից:

3. Սալահատակվել է եկեղեցու ներսը 120 քառակուսի մ. տարածությամբ:

4. Հնի փոխարեն կառուցվել է նոր Ս. Սեղանը ֆիլզիտ քարից, ճարտարապետ Արծրունի Գալիկյանի նախագծով:

5. Հիմնական վերանորոգման է ենթարկվել եկեղեցու տանիքը քարե մեծ սալերով:

6. Եկեղեցու ներսի թաղերի ոչ երեսպատված մակերեսները ծեփվել են գունավոր, շրջապատի երեսպատված քարերի նմանությամբ, 95 քառակուսի մետր:

7. Բարեկարգվել և կանաչապատվել է եկեղեցու շրջակայքը:

Վեհափառ Հայրապետը, բարձր գնահատելով Ս. Շողակաթի վանքի բարերար Ս. Գալենտերյանի նվիրատվությունը, 1958 թվականին պարգևատրեց նրան Ս. Գրիգոր Լուսավորչի առաջին կարգի ոսկյա արամանդակուր շքանշանով:

1960 թվականի հոկտեմբերի 15-ին, շաբաթ օր, Վեհափառ Հայրապետը օժեց Ս. Շողակաթի եկեղեցու նորակառուց Ս. Սեղանը: Այդ սրբազն արարողության ներկա լինելու բախտավորությունն ունեցան Ս. Շողակաթի բարերարներ տեր և տիկին Սուրբն և Շաքե Գալենտերյանները: Հոկտեմբերի 16-ին, կիրակի, Վեհափառ Հայրապետը, վերանորոգված և վերակառուցված Ս. Շողակաթի վանքի նորօծ Ս. Սեղանի վրա, մատուցեց առաջին սուրբ պատարագը:

Վեհափառ Հայրապետը, 1960 թվականի դեկտեմբերի 1-ին, տախս է իր սրբատառ կոնդակը տեր և տիկին Սուրբն և Շաքե Գալենտերյանների բարերարությամբ Ս. Շողակաթի եկեղեցու վերանորոգված առթիվ, որտեղ շինարար Հայրապետը շետում է. «Թող միշտ կանգուն, շեն ու պայծառ մեան մեր պատմական բոլոր սրբավայրերը, և բող անենցմե միշտ լոյս և երկեային շնորհներ տարածվին հայոց աշխարհին և մեր հավատավոր ազգի բոլոր զավակներուն վրա: Ամեն»⁹⁵:

95 «Էջմիածին», 1961 թ., հունվար, № 1, էջ 3—4:



ՄԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈԹՈՂՆԵՐԸ



Ս Ո Ւ Ր Բ Հ Ո Ւ Փ Ս Ի Մ Ե Ի Վ Ա Ն Ք Ը
Կ Ա Ռ Ո Ւ Ց Վ Ա Ծ Կ Ո Մ Ւ Տ Ա Ս Կ Ա Թ Ո ղ Ի Կ Ո Ս Ի Կ Ո Ղ Մ Ւ Ց 618 Թ Վ Ա Կ Ա Ն Ի Ն
Ն կ ա ր ի չ Դ ր ի գ ո ր Ա վ ա զ յ ա ն